

Գիտության զարգացման ռազմավարությունը՝ գերակայություն

Համապատասխան փաստաթուղթը դեռևս քննարկման փուլում է

ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը Հայաստանի հետխորհրդային գիտության զարգացման հաջորդականությունը բաժանելով երեք փուլերի՝ երեկ նախ առանձնացրեց 1992—1996թթ., որը, ըստ նրա, գիտության համար եղել է գահավիժման փուլ, որի ժամանակ մեր երկրի գիտությունը գտնվել է անկման իրավիճակում: 1996—2000թթ. այն տարիներն էին, երբ գահավիժման արագությունը կամաց-կամաց դանդաղեց, եւ գիտության մեջ որոշակի զարգացում արձանագրվեց:

2000-ից սկսած՝ տնտեսության տարբեր ճյուղերում արձանագրված զարգացումները իրենց նպաստը բերեցին նաեւ գիտության բնագավառին, ընդ որում՝ մեծացավ նաեւ ոլորտի նկատմամբ ուշադրությունը: 2007թ. ստեղծվեց գիտության պետական կոմիտեն, եւ փետրվար ամսին ՀՀ կառավարությունը հաստատեց գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգային դրույթները: Այսօր գիտության ոլորտին ուղղված գումարները կազմում են մոտ 7,3 մլրդ դրամ, ինչը, կոմիտեի նախագահի դիտարկմամբ, փոքր թիվ է: Գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը 2010—2020թթ. հայեցակարգային դրույթներից բխող մի փաստաթուղթ է, որտեղ մատնանշված է առաջիկա 10 տարիների գործունեության ուղեցույցը: Ինչպես ընդգծեց գիտության պետական կոմիտեի նախագահը, Հայաստանում առայժմ գործում են Խորհրդային Միությունից ժառանգած երեք տարբեր գիտություններ՝ ակադեմիական, բուհական եւ ճյուղային, որոնք միմյանց հետ սերտորեն կապված չեն:

«Այս առաջին թիրախում մենք ցանկանում ենք, որ խաղի միասնական կանոններ մշակվեն այս բոլոր գիտությունների համար»,—նշեց կոմիտեի նախագահը: Երկրորդ թիրախը գիտության ոլորտի նյութատեխնիկական բազայի ենթակառուցվածքների՝ տեղեկատվական գիտատեղեկատվական ցանցերի արդիականացման խնդիրն է, ինչը եւս շատ կարեւոր է: Հետխորհրդային շրջանում գիտական սարքավորումները մեզանում բավականաչափ հնացել են, գիտատեխնիկական բազան չի համալրվել, իսկ գիտությունից, առանց ժամանակակից սարքավորումների կիրառման, դիդակտիկ արդյունքներ ակնկալել հնարավոր չէ:

Երկրում այսօր 130 հիմնարկներ կան, որոնք սնվում են գիտության բյուջեից, իսկ ակադեմիական եւ ճյուղային ինստիտուտների թիվը մոտ 85 է: Բանախոսը հայտնեց իր մտահոգությունը այն կապակցությամբ, որ նմանատիպ մեծաքանակ հիմնարկները, որոնք շատ հաճախ գիտական ուղղվածությամբ միմյանց կրկնում են, մեծ ծախսեր են պահանջում, ինչը նպատակահարմար չէ: «Մոտ ապագայում անհրաժեշտություն կառաջանա գիտական լուրջ խնդիրներով զբաղվող հիմնականներին միավորել մեկ միասնական կառույցի մեջ եւ ապահովել նաեւ գիտություն—կրթություն կապը, որի իրականացման համար հստակ մշակված քաղաքականություն չկա:

Երկրորդ թիրախային կետով կստեղծենք համապատասխան խաղի կանոններ, որպեսզի մեր տնտեսավարողները փոքր եւ միջին ձեռնարկատերերը, նույնպես

շահագրգռված լինեն մեր գիտնականներին պարզելներ շնորհելու եւ արդյունքներն օգտագործելու գործով»,–ընդգծեց ԳՊԿ–ի նախագահը:

Հաջորդ կարեւորագույն խնդիրը գիտության եւ տեխնիկայի բնագավառում բարձր որակավարում ունեցող կադրերի թվաքանակի դինամիկային ուղղված գործողություններն են լինելու: Ինչպես փաստում է բանախոսը, 35—40 տարեկան գիտնականների թիվը կտրուկ նվազել է, եւ ուղեղների արտահոսքը հիմնականում տեղի է ունենում այս տարիքային խմբի գիտնականների շրջանում, ինչը բավական արդյունավետ տարիք է գիտելիքների դրսեւորման համար: Ըստ նրա, կառավարությունը պետք է միջոցներ ձեռնարկի այդ արտահոսքը նվազեցնելու եւ երիտասարդ կադրերի համար գիտությամբ զբաղվելը ոգեւորիչ եւ գայթակղիչ դարձնելու համար:

Փաստաթղթի ընդունումից հետո 5 տարիների ռազմավարական ծրագիրը գիտության պետական կոմիտեն կներկայացնի կառավարությանը, որում հստակ նախանշված կլինեն եւ ծախսային ոլորտները, եւ միջոցառումների ցանկը, եւ համապատասխան փաստաթղթերի ընդունման վերաբերյալ տեղեկություններ:

Լուսինե ՆԱԶԱՐՅԱՆ

25-07-2009

«Ա1+», 24.07.2009 թ.

Գիտնականները չեն վերադառնում

Ոչ մի գործարար չի ցանկանում Հայաստանում ներդրում անել գիտական որեւէ ճյուղում, քանի որ 85 գիտական ինստիտուտների մեծ մասը անմխիթար վիճակում է:

Այս եւ այլ նմանատիպ հարցեր էր այսօր բարձրացնում Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: Ըստ նրա՝ սովորաբար ինովացիոն գործունեությունը խթանելու համար շատ երկրներում պետությունը մասնավոր ձեռներեցին կամ գործարարին բերելու համար դեպի գիտություն ռիսկայության մի մասը վերցնում է իր վրա:

«Ցավոք, Հայաստանում նման բան չկա»,– ասաց նա,ապա հիշեցնելով, որ Հայաստանում դեռ կան Խորհրդային միությունից եկած 1200 գիտնականներ, որոնք կամաց-կամաց սպառվում են:

Այսինքն՝ նա փաստեց, որ Խորհրդային միության փլուզումից հետո էապես փոխվեց գիտության վիճակը, որովհետեւ բոլոր ոլորտներում, այդ թվում տնտեսության մեր պետությունը հայտնվեց կոլապսի մեջ:

Նա կարծում է, որ քանի որ գիտությունը թանկ հաճույք է, ապա չպետք է ակնկալել, որ ֆինանսների բացակայության պայմաններում նույն տեմպերով այն կզարգանա: Արդյունքում՝ Հայաստանում ուղեղների արտահոսք է:

«Հայաստանից հիմնականում գնացել են որակյալ գիտնականները»,– նկատում է Սամվել Հարությունյանը, որովհետեւ եթե Խորհրդային միության ժամանակ հայկական գիտության ֆինանսավորումը կազմում էր տարեկան 450-500 միլիոն դոլար, ապա այն այժմ ընդամենը 27միլիոն դոլար:

Ներկայումս մշակվում է 2010-2020թթ Գիտության զարգացման համար մշակված ռազմավարություն, որը ներկայացվելու է կառավարությանը: Մասնավորապես, ծրագրում բարձրացվում է կադրերի երիտասարդացման հարցը, որովհետև վերջին տարիների ընթացքում Հայաստանում կտրուկ կրճատվել է 35-40 տարեկան գիտնականների քանակը: Բացի այդ, կան այնպիսի ծրագրեր, որով առաջարկվում է երիտասարդներին տրամադրել արտոնյալ պայմաններով վարկեր բնակարանների գնման եւ այլնի համար:

«ԱՌԱՎՈՏ», 25.07.2009թ.

ՄՇԱԿՎՈՒՄ Է ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Երեկ կայացած ասուլիսում ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը տեղեկացրել է, որ մինչև սեպտեմբերի վերջ ՀՀ կառավարություն է ներկայացվելու գիտության զարգացման ռազմավարությունը՝ 2010-20թթ. համար:

Ռազմավարության նախագիծն այժմ գտնվում է մշակման փուլում, ռազմավարության ընդունումից հետո մշակվելու է ռազմավարական ծրագիր՝ հինգ տարվա կտրվածքով, ինչը նախատեսում է հստակ գործողություններ:

„АРКА”, 24.07.2009

СТРАТЕГИЯ РАЗВИТИЯ НАУКИ БУДЕТ ПРЕДЛОЖЕНА НА РАССМОТРЕНИЕ ПРАВИТЕЛЬСТВА АРМЕНИИ В КОНЦЕ СЕНТЯБРЯ – ГОСКОМИТЕТ ПО НАУКЕ

Стратегия развития научной сферы Армении будет предложена на рассмотрение правительства в конце сентября 2009 года, сообщил председатель государственного комитета по науке Министерства образования и науки Самвел Арутюнян.

«Мы намеревались представить Стратегию правительству в конце августа, однако из различных структур пришло множество предложений, которые необходимо обсудить», - сказал Арутюнян на пресс-конференции в пятницу в Национальном пресс-клубе.

По его словам, предложения в основном касались отраженных в Стратегии тактических мероприятий, поскольку значимые направления Стратегии уже получили одобрение соответствующих структур.

Стратегия развития научной сферы Армении на 2010-2020 годы в частности включает такие направления как формирование объединенной системы управления наукой и передовыми технологиями; усовершенствование материально-технической базы и инфраструктур научной сферы; увеличение количества высококвалифицированных ученых; стимулирование фундаментальных и прикладных исследований, увеличение их роли в экономическом и социальном развитии; развитие международного научно-технического сотрудничества.

**Հայաստանում գիտության զարգացման համար մշակվում է առաջիկա 5 տարիների
ռազմավարական ծրագիր**

Հայաստանում գիտության զարգացման համար մշակվում է առաջիկա 5 տարիների ռազմավարական ծրագիր, որում կարեւորվում է հատկապես «ուղեղների արտահոսքը» նվազեցնելու հարցը:

Ինչպես այսօր կայացած ասուլիսում ասաց ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, վերոնշյալ ռազմավարության մեջ նախանշված կլինեն բոլոր այն գերակայությունները, որոնք գիտական տարբեր ծրագրերում երիտասարդների ներգրավման, դրա միջոցով նրանց երկրում պահելու հնարավորություններ կտան:

Ըստ Ս. Հարությունյանի՝ ռազմավարությամբ ամրագրված կլինեն նաև գիտությամբ զբաղվող երիտասարդ մասնագետներին պետության կողմից արտոնյալ պայմանները՝ կապված մի շարք ֆինանսատնտեսական հարցերի հետ: Բացի դրանից, դրամաշնորհային ծրագրերում երիտասարդ գիտնականներին ներգրավելու առաջանահերթություն կլինի, ինչը որոշ չափով կկանխի երիտասարդ մասնագետների արտագաղթը հայրենիքից: Ռազմավարությամբ՝ գիտությամբ զբաղվող երիտասարդ ակտիվիստների համար կսահմանվի հավելյալ աշխատավարձ: «Երիտասարդ գիտաշխատողին երկրում պահելու համար հարկավոր է ճկուն աշխատավարձերի համակարգ, որպեսզի գումարային հարցերում խնդիրները նվազեն եւ սամանված աշխատավարձերից բացի երիտասարդ գիտաշխատողը հնարավորություն ունենա իր ակտիվ գործունեությամբ նաև խրախուսական եւ դրամաշնորհային գումար վաստակել», - ասաց Ս.Հարությունյանը:

Կոմիտեի նախագահի խոսքով, գիտնականների միջին տարիքը Հայաստանում այժմ 60-62 է, իսկ մի շարք մասնագիտությունների գծով, օրինակ՝ գյուղատնտեսությունում, 70-72-ը: «Գիտությամբ զբաղվելու, լուրջ գիտական գործունեություն ծավալելու եւ դրսևորվելու իրական տարիքն աշխարհում համարվում է 35-45-ը, իսկ մեզ մոտ այդ տարիքային սահմաններում գիտաշխատողների շատ քիչ կարելի է հանդիպել», - ասաց նա:

Նշենք, որ Գիտության պետական կոմիտեն մշակել է Հայաստանում գիտության զարգացման ռազմավարության նախագիծ առաջիկա 10 տարվա համար եւ ներկայացրել ՀՀ կառավարություն: Սակայն դրանից բացի առաջիկա 5 տարիների համար մշակվող ռազմավարությունը կլինի իրականացվելիք կոնկրետ միջոցառումները, բարեփոխումները համակարգող ծրագիր, որը համընդհանուր քննարկումներից հետո միայն կներկայացվի կառավարությանը:

Առաջ գիտություն

Ուղեղների արտահոսք հիմա գրեթե չկա, ինչ որ եղավ՝ եղավ, արդեն երեք տարի է՝ մեզ մոտ պահպանվում է 7 հազար 5 հարյուր թիվը

Աշնանը գիտության պետական կոմիտեն կառավարություն կներկայացնի իր մշակած 2010-2020 թվականների գիտության զարգացման ռազմավարությունը, որի

կարելու կետերից են կադրերի երիտասարդացումը եւ նյութատեխնիկական բազայի համալրումը՝ երեկ այս մասին Մամուլի ազգային ակումբում հայտարարեց Գիտության պետական կոմիտեի նախագահ Մամվել Հարությունյանը: Վերջինիս խոսքով, այսօր Հայաստանում ոչ մի բիզնեսմեն գիտության ոլորտում ներդրումներ չի անում, քանի որ 85 գիտական կենտրոններն անմխիթար վիճակում են: "30 տարվա սարքի վրա ռիսկ չեն անում գումարներ դնել. այստեղ մեծ է պետության դերը, որը ռիսկի որոշակի մասը վերցնում է իր վրա: Սովորաբար, ինովացիոն գործունեությունը խթանելու համար շատ պետություններում խնդրի լուծման ռիսկի մի մասը պետությունն իր վրա է վերցնում, ցավոք սրտի, այդ գործունեությունը Հայաստանում չկա",-նշեց պարոն Հարությունյանը: Ինչ վերաբերում է մերօրյա գիտնականների տարիքային կազմին, ապա, Հարությունյանի կարծիքով, այն բավականին տարօրինակ տեսք ունի: Նվազել է 35-40 տարեկան գիտնականների քանակը, հենց այս տարիքում են գիտնականի արդյունավետ աշխատանքով զբաղվում, մարդու ունակություններն ու կարողությունները հիմնականում դրսևորվում են այս տարիքում՝ ավելացրեց պարոն Հարությունյանը: Որպեսզի տեղի չունենա արտահոսք, եւ երիտասարդ կադրերի խնդիր չունենանք, կառավարությունը պետք է համապատասխան միջոցներ ձեռք առնի՝ նրանց երկրում պահելու համար: Գիտության կոմիտեի ռազմավարության ծրագրում կետ կա նաեւ հայագիտության զարգացման ուղղության վերաբերյալ: Անդրադառնալով Հայաստանում հումանիտար ուղղության բացերին, Հարությունյանն ասաց, որ այդ վիճակում են նաեւ հետխորհրդային մի շարք երկրներ, այսինքն, վիճակն անմխիթար է նաեւ Չեխոսլովակիայում, Բուլղարիայում, Լեհաստանում: Իսկ առաջընթացի մասին խոսելով՝ Հարությունյանը հույս հայտնեց, որ ապագայում մենք լուրջ առաջընթացներ կունենանք հատկապես քիմիայի բնագավառում, հեռանկարային են նաեւ հանքարդյունաբերության ու էկոլոգիայի բնագավառները: Պարոն Հարությունյանից մենք փորձեցինք պարզել, թե ինչ վիճակում է գտնվում ուղեղների արտահոսքը հատկապես վերջին տարիներին:

- Պարոն Հարությունյան, գիտնականների արտահոսքի աճի միտում նկատվո՞ւմ է:

- Ուղեղների արտահոսք հիմա գրեթե չկա, ինչ որ եղավ՝ եղավ, արդեն երեք տարի է՝ մեզ մոտ պահպանվում է 7 հազար 5 հարյուր թիվը: 92-ից մինչեւ 96 թիվը սարսափելի մեծ թիվ էր կազմում գիտնականների արտահոսքը:

- Իսկ արտահոսքին կարո՞ղ է նպաստել, օրինակ, "Լույս" հիմնադրամը, որը ստեղծվել է աշխարհի առաջատար բուհերում սովորող ուսանողներին աջակցելու նպատակով:

- Դժվարանում եմ ասել, քանի որ այդ հիմնադրամը նոր է ստեղծվել: Բայց չեմ կարծում, որովհետեւ երիտասարդների մոտ շատ հետաքրքիր բան կա, բոլորս էլ երիտասարդ ենք եղել: Երիտասարդը երբ որ զգում է, որ իր մեջտեղը պետություն կա, հովանավոր, աջակցություն կա, այսինքն, երբ որ մեկը կա, որ էլ մարդուն աջակցում է, այդ մարդը հակված է դեպի դա: Իմ ասալիքանտներին, որ 3-4 հարյուր դոլար աշխատավարձ էի տալիս, իրենք չէին համաձայնում դրսում երեք հազար դոլարով աշխատել:

- Այսինքն՝ 3-4 հարյուր դոլար աշխատավարձը կանգնեցրե՞ց արտահոսքը:

- Չէ, նրանց մի մասը 1200 գիտնական, տարբեր գրանտային ծրագրերից փող է ստանում, եւ աշխատավարձն էնքան էլ ցածր չէ:

Գիտության պետական կոմիտեն անհրաժեշտ է համարում մշակել հայագիտության զարգացման առանձին ծրագիր

ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն անհրաժեշտ է համարում մշակել հայագիտության զարգացման առանձին ծրագիր՝ որպես հումանիտար գիտության առանձին ուղղություն:

«Հայագիտությունը Հայաստանի համար լուրջ ռազմավարական նշանակություն ունի, քանի որ այդ ոլորտում կան մեր պետության հեղինակության և նրա ապագա զարգացման հետ կապված բազմաթիվ խնդիրներ», - ուրբաթ Մամուլի ազգային ակումբում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ ասաց Հարությունյանը:

Նրա խոսքերով՝ Գիտության պետական կոմիտեն մշակել է Հայաստանի Գիտական ոլորտի զարգացման 2010-2020 թթ. ռազմավարությունը, որի առանձին ուղղություններից է հայագիտության զարգացումը հնգամյա կտրվածքով, սակայն անհրաժեշտ է մշակել առանձին ծրագիր՝ այդ ուղղությունն առավել նպատակային և արդյունավետ իրագործելու համար:

Նրա խոսքերով՝ ծրագրի իրագործմամբ կարող է զբաղվել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, որը գիտության այդ ոլորտում պետության կողմից լիազորված կառույց է:

Գիտության պետական կոմիտեի Հայաստանի գիտական ոլորտի զարգացման ռազմավարության մեջ որպես հայագիտության ոլորտում գոյություն ունեցող խնդիրներ, մասնավորապես, նշվում են՝ հատուկ ռազմավարական և հայեցակարգային մոտեցումների բացակայությունը, հայագիտության ոլորտում գիտական աշխատությունների որակի անկումը, ինչպես նաև Հայաստանի և Մփյուռքի հայագիտական կառույցների միջև թույլ կապերը, որոնք իջեցնում են միջազգային նշանակություն ունեցող գիտական ուղղություններից մեկի՝ հայագիտության մակարդակը:

Միաժամանակ Հարությունյանը կարծում է, որ հումանիտար գիտությունների զարգացած չլինելը ոչ միայն Հայաստանի, այլև մի շարք այլ երկրների ցավն է: Սակայն, նրա խոսքերով, հումանիտար ոլորտն ակտիվացնելու համար անհրաժեշտ է որոշակի ֆինանսներ ներդնել:

Հայաստանում զգալիորեն կրճատվել է երիտասարդ գիտնականների թիվը. Գիտության պետական կոմիտե

Հայաստանում այսօր զգալիորեն կրճատվել է 30-40 տարեկան երիտասարդ գիտնականների թիվը, կարծում է ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

«Հայաստանում այսօր զգալիորեն կրճատվել է 30-40 տարեկան երիտասարդ գիտնականների թիվը, որը գիտնականի համար ամենակարևոր տարիքն է սեփական

ներուժը բացահայտելու տեսակետից», - ուրբաթ Մամուլի ազգային ակումբում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ ասաց Հարությունյանը:

Նրա խոսքերով՝ Հայաստանում այսօր գիտության թեկնածուի միջին տարիքը 57-ն է, գիտության դոկտորներինը՝ 61-62: Միաժամանակ պետական կոմիտեի նախագահը նշեց, որ գիտնականների տարիքը կարող է տատանվել է՝ կախված գիտական ոլորտներից:

«Օրինակ՝ ագրարային ոլորտում Հայաստանում այսօր գիտությունների դոկտորների միջին տարիքը 73-ն է», - ասաց Հարությունյանը:

Նրա խոսքերով՝ այս կապակցությամբ պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի Հայաստանում գիտությունը գրավիչ դարձնելու համար՝ զսպելով Հայաստանից գիտական ներուժի արտահոսքը:

Հարությունյանը կարծում է, որ, օրինակ, կառավարությունը պետք է արտոնյալ վարկեր տրամադրի երիտասարդ մասնագետներին՝ բնակարան ձեռք բերելու համար, քանի որ նրանցից շատերը բնակարան չունենալու պատճառով հեռանում են երկրից:

Խոսելով Գիտության պետական կոմիտեի կողմից մշակվող Հայաստանի Գիտական ոլորտի զարգացման 2010-2020 թթ. ռազմավարության մասին՝ Հարությունյանը նշեց, որ ռազմավարության շրջանակներում նախատեսվում է մինչև 30 տարեկան երիտասարդների համար դրամաշնորհային ծրագրեր իրագործել, իսկ ակտիվ երիտասարդ գիտնականների աշխատությունները կարող են տպագրվել հեղինակավոր միջազգային գիտական հրատարակություններում, և նրանց աշխատանքն արժանիորեն կվարձատրվի:

Բացի այդ, Հարությունյանի խոսքերով, նախատեսվում է կազմակերպել ամառային դպրոցներ երիտասարդ մասնագետների համար:

«PANORAMA.am», 24.07.2009 թ.

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՏ Է ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՒՄ: 28 ՀԱՉԱՐ ԳԻՏՆԱԿԱՆԻՑ ՄԱՍ 7500»

Խորհրդային տարիներին գիտությունը բավականին մեծ ֆինանսավորում էր հատկացվում, ինչը չես ասի այսօրվա մասին,- լրագրողների հետ հանդիպման ժամանակ այսօր ասաց Գիտության պետական կոմիտեի նախագահ Մամվել Հարությունյանը:

Նրա խոսքով, խորհրդային տարիներին գիտության ֆինանսավորման ծավալը կազմում էր տարեկան 450-500 մլն դոլար: Միայն Ֆիզիկայի ինստիտուտի տարեկան ֆինանսավորման ծավալը կազմում էր 30 մլն ռուբլի: Այսօր Հայաստանի գիտության բյուջեն կազմում է ընդամենը 27 մլն դոլար: Ս. Հարությունյանի խոսքով, Հայաստանի անկախացումից հետո գիտությունը հայտնվեց բավականին ծանր վիճակում, սակայն խորհրդային տարիներին գիտության ասպարեզում Հայաստանը համարվում էր լավագույն հանրապետություններից մեկը:

Ըստ նրա, այս վիճակում ակնկալել, որ նույն ինտենսիվությամբ հետազոտական աշխատանքներ կիրականացվեն, ինչպես խորհրդային տարիներին էր, սխալ կլինի:

Նա խոսքով, Խորհրդային միության փլուզումից հետո մեծ քանակությամբ ուղեղների արտահոսք տեղի ունեցավ: 1990-ականներին Հայաստանի գիտական կադրերի քանակը մինչև 2000 թվականը չորս անգամ նվազել է: 90-ական

թվականներին Հայաստանում կար գրանցված 28 հազար գիտնական, այսօր գրանցված է 7500-ը:

Ս. Հարությունյանի վստահեցմամբ, ուղեղների արտահոսքի պատճառը եղել է վատ ֆինանսավորումը: 2000 թվականին գիտության ֆինանսավորման ծավալը կազմում էր 4 մլն դոլար: Միայն 2000 թվականից հետո նոր որոշակի զարգացում սկսվեց գիտության մեջ, այդ տարիներին սկսվեցին նաև բարեփոխումներ իրականացվել, որոնք շարունակվում են մինչ հիմա:

«PANORAMA.am», 24.07.2009 թ.

ՄՇԱԿՎՈՒՄ Է «ԳԻՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ՝ 2010-2020 ԹԹ ՀԱՄԱՐ»

Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն այսօրվա ասուլիսում հայտարարեց, որ մինչև սեպտեմբերի վերջ ՀՀ կառավարություն է ներկայացվելու գիտության զարգացման ռազմավարությունը՝ 2010-2020թթ. համար:

Նրա խոսքերով, ռազմավարության նախագիծն այժմ գտնվում է մշակման փուլում: Նա նշեց, որ ռազմավարության ընդունումից հետո մշակվելու է ռազմավարական ծրագիր՝ հինգ տարվա կտրվածքով, ինչը նախատեսում է հստակ գործողություններ:

Ս. Հարությունյանը ներկայացրեց ռազմավարության մի շարք կետեր, որոնք կնպաստեն ոլորտի զարգացմանը:

Նա կարևոր խնդիրներից է համարում նյութատեխնիկական բազայի թարմացումը, կադրերի «երիտասարդացումը»:

Վերջին տարիների ընթացքում Հայաստանում կտրուկ կրճատվել է 35-40 տարեկան գիտնականների քանակը:

«Դա ուրախալի փաստ է. այդ տարիքն ամենաարդյունավետն է համարվում գիտնականի կյանքում», - հավելեց նա:

Գիտության պետական կոմիտեի նախագահի խոսքերով, անհրաժեշտ է այնպիսի պայմաններ ապահովել, որոնք կհետաքրքրեն երիտասարդ մասնագետներին:

Առաջիկայում Գիտության պետական կոմիտեն պայմանագիր կստորագրի Գերմանիայի և Բրազիլիայի կրթության և գիտության նախարարությունների հետ: Ռուսաստանի, Բելառուսի և Ֆինլանդիայի տարբեր կրթական և գիտական կառույցների հետ համագործակցության պայմանագրեր արդեն ստորագրվել են:

«Tert.am», 24.07.2009 թ.

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո և անկախության առաջին տարիներին Հայաստանը վերապրել է ծանր ժամանակներ: Ինչպես մամուլի ասուլիսի ժամանակ հայտնել է Հայաստանի կրթության և գիտության նախարարությունն առընթեր Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, խորհրդային տարիներին հայ գիտնականները և անձամբ գիտությունը համարվում էին ամենաուժեղներից

մեկը: Բացի այդ, ըստ վերջինիս, այս ոլորտի ֆինանսավորմանը հատկացվում էին հսկայական գումարներ: Հարությունյանը նշել է, որ խորհրդային տարիներին հայկական գիտության ֆինանսավորումը կազմում էր տարեկանում 450-500 մլն դոլար: Իսկ այժմ պետֆինանսավորման ծավալը կազմում է 27 մլն դոլար: «Խորհրդային Միության փլուզումից հետո բազմաթիվ ոլորտներ հայտնվել էին կոլապսի մեջ: Մենք կորցրեցինք ուժեղ մասնագետների», - հավելել է նա:

Հարությունյանը նաև տեղեկացրել է, որ այս ժամանակահատվածում հայ գիտնականների քանակը կրճատվել է քառակի: Այսօրվա դրությամբ Հայաստանում կա մոտ 7,5 հազ. գիտնական: Խոսելով ներկա իրավիճակից դուրս գալու հնարավոր որոշումների մասին՝ կոմիտեի նախագահը նախանշել է 2010-2020թթ. գիտության զարգացման համար մշակված ռազմավարությունը: Ըստ վերջինիս՝ ռազմավարության նախագիծը գտնվում է քննարկման փուլում: Արդեն ընթացիկ տարվա սեպտեմբերի վերջին նախագիծը կներկայացվի կառավարության հաստատմանը: Իսկ փաստաթղթի ընդունումից հետո մշակվելու է ռազմավարական ծրագիր հինգ տարվա կտրվածքով, որը նախատեսում է հստակ գործողություններ:

Հարությունյանը ներկայացրել է ռազմավարության մի քանի թիրախներ: Նրանց թվում նա մատնանշել է հայկական գիտության, ավելի ճիշտ՝ կադրերի «երիտասարդացումը»՝ Ըստ կոմիտեի նախագահի՝ վերջին տարիների ընթացքում Հայաստանում կտրուկ կրճատվել է 35-40 տարիքի գիտնականների քանակը: Այս տարիքն ամենաարդյունավետն է համարվում գիտնականի կյանքում: Համեմատության համար Հարությունյանը մեջբերել է որոշ տվյալներ: Այսպիսով, գիտությունների թեկնածուների միջին տարիքը 57-ն է, իսկ գիտությունների դոկտորներինը՝ 61

Հարությունյանը նաև նշել է, որ անհրաժեշտ է այնպիսի պայմանների ապահովում, որոնք կհետաքրքրեն երիտասարդ մասնագետներին: Դրանց թվում նա օրինակ է բերել գրանտային նախագծերը, ամառային դպրոցների, տարբեր սեմինարների անցկացումը, ինչպես նաև կայուն աշխատավարձերը: Կոմիտեի ղեկավարը թիրախային նպատակների մեջ առանձնացրել է նաև գիտության ոլորտի նյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքների, այդ թվում՝ գիտատեղեկատվական ցանցի արդիականացումը:

Հարությունյանը նաև ընդգծել է միջազգային համագործակցության կարևորությունը: Նա տեղեկացրել է, որ արդեն ստորագրված են Ռուսաստանի, Բելառուսի և Ֆինլանդիայի տարբեր կրթական և գիտական կառույցների հետ համագործակցելու պայմանագրեր: Բացի այդ, առաջիկայում կոմիտեն պայմանագիր կստորագրի Գերմանիայի և Բրազիլիայի կրթության և գիտության նախարարությունների հետ: